Union of Credit Organizations of the Republic of Armenia

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ԱՄՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հոկտեմբեր, 2014

Երևան, 2014

Բովանդակություն

Օգտագործված տնտեսական ցուցանիշների համառոտագիր.....2

Ֆինանսական դիրք.....3

Վարկային պորտֆել և համեմատականներ.....3

Տրամադրված վարկերի ծավալ.....3

Տրամադրված վարկերի քանակ.....4

Մասնաճյուղեր և վարկային պորտֆելի ցուցանիշներ.....5

Վարկերի Կառավարում.....6

Վերլուծական գործակիցներ.....8

Հավելված.....10

Օգտագործված տնտեսական ցուցանիշների համառոտագիր

ՀՀ վարկային կազմակերպությունների միության անդամներն իրենց տնտեսական գործունեության վերաբերյալ ՀՀ վարկային կազմակերպությունների միությանն (ՀՀ ՎԿՄ) ամսական կտրվածքով տրամադրում են տասը տնտեսական ցուցանիշներ: Այդ ցուցանիշների հիման վրա Վարկային կազմակերպությունների միությունն իրականացնում է ֆինանսական վերլուծություն, որի նպատակն է միության անդամներին ներկայացնել վարկային ինդուստրիայում տեղի ունեցող տնտեսական շարժերը: Ցուցանիշների մի մասը հրապարակային տեղեկատվություն է, որոնք տեղ են գտնում վարկային կազմակերպությունների կողմից ներկայացվող եռամսյակային հաշվետվութուններում: Սակայն սույն վերլուծության համար ՎԿՄ-ի անդամ կազմակերպությունների կողմից տրամադրվում են նաև այնպիսի տնտեսական ցուցանիշներ, որոնք տեղ չեն գտնում հրապարակային եռամսյակային հաշվետվությունների մեջ:

Ֆինանսական Դիրք

- **Ակտիվներ:** ՀՀ ՎԿՄ անդամների համախառն ակտիվները 2014թ.-ի հոկտեմբերի 31-ի դրությամբ կազմել են 97.9 մլրդ դրամ՝ 2013թ.-ի հոկտեմբերի նկատմամբ ունենալով 21.8% աճ, իսկ 2014թ.-ի սեպտեմբերի նկատմամբ՝ 0.8% (Գծ. 1):
- **Վարկային Պորտֆել:** ՀՀ ՎԿՄ անդամների վարկային պորտֆելը 2014թ.-ի հոկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 87.7 մլրդ դրամ՝ նախորդ տարվա հոկտեմբերի նկատմամբ ունենալով 20.6%, իսկ 2014թ. սեպտեմբերի նկատմամբ՝ 1.8 % աճ:
- **Կապիտալ:** ՀՀ ՎԿՄ անդամների ընդհանուր կապիտալը 2014թ.-ի հոկտեմբերի վերջի դրությամբ կազմել է 32.9 մլրդ դրամ՝ 2013թ.-ի հոկտեմբերի նկատմամբ աճելով 15.9%, իսկ 2014թ.-ի սեպտեմբերի նկատմամբ՝ 0.9%:

Գծապատկեր 1. ՀՀ ՎԿՄ անդամների ֆինանսական դիրքը 2013-2014թ.թ.-ների հոկտեմբերի վերջի դրությամբ



Վարկային պորտֆել և համեմատականներ

Տրամադրված վարկերի ծավալը

- 2014թ.-ի հոկտեմբեր ամսին ՀՀ ՎԿՄ անդամների կողմից տրամադրվել է 10.04 մլրդ դրամի վարկ, որը նախորդ ամսվա նկատմամբ աճել է 21,5%, իսկ 2013թ.-ի հոկտեմբերի նկատմամբ՝ 5,7%-ով (Գծ. 2):

- 2014թ.-ի հունվար-հոկտեմբեր ամիսներին ՀՀ ՎԿՄ անդամների կողմից տրամադրված ընդհանուր վարկերի ծավալը կազմել է 76.23 մլրդ դրամ, որը 2013թ.-ի նույն ժամանակահատվածի նկատմամբ աճել է 1.2%-ով:

Գծապատկեր 2. ՀՀ ՎԿՄ անդամների կողմից հունվար-հոկտեմբեր ամիսներին տրամադրված վարկերի ծավալը



Տրամադրված վարկերի քանակը

- 2014թ.-ի հոկտեմբեր ամսին ՀՀ ՎԿՄ անդամների կողմից տրամադրվել է 12,475 վարկ, որը նախորդ ամսվա նկատմամբ աճել է 15.1%, իսկ 2013թ.-ի հոկտեմբերի նկատմամբ՝ 4%-ով (Գծ. 3):
- 2014թ.-ի հունվար-հոկտեմբեր ամիսներին ՀՀ ՎԿՄ անդամների կողմից տրամադրվել է 106,437 վարկ, որը 2013թ.-ի նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազել է 1.3 %-ով:
- 2014թ.-ի հոկտեմբեր ամսվա վերջի դրությամբ ՀՀ ՎԿՄ անդամները ունեցել են 141,583 ակտիվ վարկառուներ: Ակտիվ վարկառուների քանակը 2013թ.-ի հոկտեմբերի նկատմամբ աճել է 10.3%-ով, իսկ 2014թ.-ի սեպտեմբերի նկատմամբ մնացել է անփոփոխ:
- ՀՀ ՎԿՄ անդամների կողմից 2014թ.-ի հոկտեմբերին տրամադրված վարկերի միջին մեծությունը կազմել է 805 հազար դրամ, իսկ վարկային պորտֆելի միջին վարկի մեծությունը՝ 619 հազար դրամ: Նույն ցուցանիշները 2013թ.-ի հոկտեմբերին կազմել են համապատասխանաբար՝ 792 և 566 հազարական դրամ (Գծ. 4):

Գծապատկեր 3. ՀՀ ՎԿՄ անդամների կողմից հունվար-հոկտեմբեր ամիսներին տրամադրված վարկերի քանակը



Գծապատկեր 4. ՀՀ ՎԿՄ անդամների կողմից տրամադրված վարկերի միջին մեծությունը



Մասնաճյուղեր և վարկային պորտֆելի ցուցանիշներ

- 2014թ.-ի հոկտեմբերի դրությամբ միության անդամները միասին վերցրած ՀՀ ամբողջ տարածքում ունեցել են 112 մասնաճյուղ, որը համեմատած 2013թ.-ի հոկտեմբերի աճել է 6-ով:
- ՀՀ ՎԿՄ անդամները 2014թ.-ի հոկտեմբերի դրությամբ ունեցել են 615 վարկային մասնագետ, 2013թ.-ի հոկտեմբերի 565 վարկային մասնագետի համեմատ:

- 2014թ.-ի հոկտեմբերին ՀՀ ՎԿՄ անդամների կողմից տրամադրված վարկերի գծով մեկ վարկային մասնագետի հաշվով միջին վարկային պորտֆելը կազմել է 16.33 մլն դրամ, նախորդ ամսին՝ 13.6 մլն դրամ, իսկ 2013թ.-ի հոկտեմբերին՝ 16.8 մլն դրամ (Գծ. 5):
- 2014թ.-ի հոկտեմբերի վերջի դրությամբ ՀՀ ՎԿՄ անդամների վարկային պորտֆելը մեկ վարկային մասնագետի հաշվով կազմել է 142.6 մլն դրամ, նախորդ ամսվա 141.9 մլն դրամի և 2013թ.-ի հոկտեմբերի 128.7 մլն դրամի համեմատ:

Գծապատկեր 5. ՀՀ ՎԿՄ անդամների միջին վարկային պորտֆելը մեկ վարկային մասնագետի հաշվով



Վարկերի Կառավարում

- **Մինչև 30 օր ժամկետանց պորտֆել:** ՀՀ ՎԿՄ անդամների մինչև 30 օր ժամկետանց վարկերի ծավալը 2014թ.-ի հոկտեմբերի վերջի դրությամբ կազմել է 571.2 մլն դրամ, նախորդ ամսվա 563.6 մլն դրամի և 2013թ.-ի հոկտեմբերի՝ 622.5 մլն դրամի համեմատ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ մինչև 30 օր ժամկետանց վարկերի ծավալը նվազել է 8.2 %-ով, իսկ 2014թ.-ի սեպտեմբերի նկատմամբ աճել 1.3 %-ով: 2014թ.-ի հոկտեմբերի վերջի դրությամբ մինչև 30 օր ժամկետանց վարկերի պորտֆելը կազմել է ընդհանուր վարկային պորտֆելի 0.65%-ը, 2013թ.-ի հոկտեմբերին՝ 0.86%-ը (Գծ. 6):

- **Ժամկետանց պորտֆել 30 օրից ավել:** ՀՀ ՎԿՄ անդամների 30 օրից ավել ժամկետանց վարկերի ծավալը 2014թ.-ի հոկտեմբերի վերջի դրությամբ կազմել է 1,231.6 մլն դրամ, նախորդ ամսվա 1070.6 մլն դրամի և 2013թ.-ի հոկտեմբերի՝ 686.1 մլն դրամի համեմատ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ 30 օրից ավել ժամկետանց վարկերի ծավալը աճել է 79.5%-ով, իսկ 2014թ.-ի սեպտեմբերի նկատմամբ՝ 15%-ով: 2014թ.-ի հոկտեմբերի վերջի դրությամբ 30 օրից ավել ժամկետանց վարկերի պորտֆելը կազմել է ընդհանուր վարկային պորտֆելի 1.4%-ը, 2013թ.-ի հոկտեմբերին՝ 0.94%-ը:
- **Զուտ դուրսգրումներ:** 2014թ.-ի հոկտեմբերի վերջի դրությամբ միության անդամ վարկային կազմակերպությունների զուտ դուրս գրված վարկերի ծավալը կազմել է 580.3 մլն դրամ, նախորդ ամսվա 563.2 մլն դրամի և 2013թ.-ի հոկտեմբերի՝ 202.2 մլն դրամի համեմատ: Զուտ դուրս գրված վարկերի ծավալը 2014թ.-ի հոկտեմբերին նախորդ ամսվա նկատմամբ աճել է 3%-ով, իսկ 2013թ.-ի հոկտեմբերի նկատմամբ՝ 2.87 անգամ: Միության անդամների սույն թվականի հոկտեմբերին զուտ դուրս գրված վարկերի ծավալը կազմել է համախառն վարկային պորտֆելի 0.66%-ը, նախորդ ամսվա 0.65%-ի և 2013թ.-ի հոկտեմբերի 0.28%-ի համեմատ:

Գծապատկեր 6. ՀՀ ՎԿՄ անդամների վարկերի ծավալները հոկտեմբերի 31-ի դրությամբ



Վերլուծական գործակիցներ

- 2014թ.-ի հոկտեմբերի դրությամբ ՀՀ ՎԿՄ անդամների համախառն վարկային պորտֆելի և ակտիվների հարաբերակցությունը կազմել է 89.6%, որը վկայում է այն մասին, որ ակտիվների ծանրակշիռ մեծամասնությունը ուղղվում է վարկավորմանը: Նույն ցուցանիշը 2013թ.-ի հոկտեմբերին կազմել է 90.5% (Գծ. 7):
- Սույն թվականի հոկտեմբերի դրությամբ միության անդամների ընդհանուր կապիտալի և վարկային պորտֆելի հարաբերակցությունը կազմել է 37.6%: Այս ցուցանիշը ցույց է տալիս, որ միության անդամների վարկավորման ծավալի մոտ 38% իրականացվում է սեփական կապիտալի հաշվին: Նույն ցուցանիշը 2013թ.-ի հոկտեմբերին կազմել է 39.1%:
- 2014թ.-ի հոկտեմբերի վերջի դրությամբ ՀՀ ՎԿՄ անդամների ընդհանուր կապիտալի և ակտիվների հարաբերակցությունը կազմել է 33.6%, որը վկայում է միության անդամ վարկային կազմակերպությունների բարձր կապիտալիզացիայի մասին: Նույն ցուցանիշը 2013թ.-ի հոկտեմբերին կազմել է 35.4%: Նախորդ տարվա նկատմամբ այս ցուցանիշի նվազումը վկայում է այն մասին, որ միության անդամ վարկային կազմակերպությունները վերջին մեկ տարում վարկավորման նպատակով ավելի շատ ֆոնդեր են ներգրավել:
- Ընդհանուր պարտավորությունների և կապիտալի հարաբերակցության ցուցանիշը ցույց է տալիս միավոր կապիտալի դիմաց ունեցած պարտավորությունների չափը: Այս ցուցանիշը ցույց է տալիս նաև վարկային բիզնեսի կառավարման արդյունավետության մակարդակը: 2014թ.-ի հոկտեմբեր ամսվա դրությամբ ՀՀ ՎԿՄ անդամների համար այս գործակիցը կազմել է 1.97, այսինքն միավոր կապիտալի դիմաց ունեցած պարտավորությունները 1.97 անգամ գերազանցել է կապիտալի մակարդակը: Նույն ցուցանիշը նախորդ տարվա հոկտեմբերի համար կազմել է 1.83: Կապիտալի և պարտավորությունների գործակցի աճը վկայում է վարկային բիզնեսի կառավարման արդյունավետության աճի մասին:

Գծապատկեր 7. ՀՀ ՎԿՄ անդամների վերլուծական գործակիցներ



ՀԱՎԵԼՎԱԾ

ՀՀ ՎԿՄ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԿՈՆՍՈԼԻԴԱՑՎԱԾ ԿՈՒՄՈՒԼՅԱՏԻՎ ՏՎՅԱԼՆԵՐ

ՀՈՒՆՎԱՐ - ՀՈԿՏԵՄԲԵՐ - 2014 - Կումուլյատիվ

հազ. դր

Category	14-Jan	14-Feb	14-Mar	14-Apr	14-May	14-Jun	14-Jul	14-Aug	14-Sep	14-Oct	TOTAL
Total volume of disbursements within particular month	8,595	12,699	11,435	10,897	10,005	10,214	10,011	9,263	10,843	12,475	106,437
Հաշվետու ամսվա ընթացքում տրամադրված վարկերի քանակը և ծավալը	5,319,441	8,197,129	8,184,565	8,188,232	7,032,144	7,172,961	7,010,469	6,827,480	8,261,837	10,039,696	76,233,954
Gross Loan Portfolio											
Համախառն վարկային պորտֆել	**80,122,896**	**82,463,173**	**83,423,614**	**86,056,102**	**85,525,490**	**85,627,002**	**86,123,828**	**85,435,093**	**86,125,097**	**87,701,961**	
Number of clients											
Ակտիվ վարկառուների քանակ	133,507	135,557	136,768	138,978	138,710	139,307	141,176	141,424	141,558	141,583	
PAR 1-30 days											
Ժամկետանց պորտֆել 1-30 օր	524,597	405,095	334,964	416,983	413,536	471,534	566,030	509,898	563,624	571,183	4,777,443
PAR over 30 days											
Ժամկետանց պորտֆել 30 օրից ավելի	909,047	747,731	772,443	738,368	754,780	813,725	861,254	1,072,746	1,070,612	1,231,604	8,972,310
Net write offs YTD											
Զուտ դուրսգրումներ տարեսկզբից	**93,370**	**134,969**	**253,090**	**255,558**	**337,531**	**392,738**	**466,001**	**522,645**	**563,209**	**580,309**	
Number of credit officers											
Վարկային մասնագետների թիվը	602	598	586	584	576	577	585	589	607	615	
Total number of offices - branches and representative offices											
Մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ընդհանուր թիվը	109	109	109	110	108	110	112	112	112	112	
Total assets											
Ընդամենը ակտիվներ	**86,444,712**	**88,611,913**	**88,884,766**	**93,354,586**	**93,155,090**	**93,498,995**	**94,453,651**	**95,778,499**	**97,067,664**	**97,891,825**	
Total equity											
Ընդհանուր կապիտալ	**29,671,281**	**29,904,187**	**30,000,765**	**30,585,625**	**30,438,047**	**31,286,284**	**31,713,708**	**31,990,021**	**32,639,144**	**32,939,214**	

ՀԱՎԵԼՎԱԾ

Գործակիցներ հաշվարկված յուրաքանչյուր ամսվա համար

Category	14-Jan	14-Feb	14-Mar	14-Apr	14-May	14-Jun	14-Jul	14-Aug	14-Sep	14-Oct	TOTAL
Average Loan Volume /for this month/ thousands Drams											
Վարկի Միջին Մեծությունը /այս ամսվա համար/ հազ. Դր.	619	645	716	751	703	702	700	737	762	805	716
Average Loan Volume of Gross Portfolio / thousands Drams											
Համախառն Վարկերի Միջին Մեծությունը / հազ. Դր.	600	608	610	619	617	615	610	604	608	619	
PAR 1-30 days / Loan Portfolio Ratio (%)											
ժամկետանց պորտֆել 1-30 օր / Վարկային Պորտֆել Գործակից (%)	0.65%	0.49%	0.40%	0.48%	0.48%	0.55%	0.66%	0.60%	0.65%	0.65%	
PAR over 30 days / Loan Portfolio Ratio (%)											
ժամկետանց պորտֆել 30 օրից ավելի / Վարկային Պորտֆել Գործակից (%)	1.13%	0.91%	0.93%	0.86%	0.88%	0.95%	1.00%	1.26%	1.24%	1.40%	
Net write offs YTD / Loan Portfolio Ratio (%)											
Զուտ դուրսգրումներ տարեսկզբից / Վարկային Պորտֆել Գործակից (%)	0.12%	0.16%	0.30%	0.30%	0.39%	0.46%	0.54%	0.61%	0.65%	0.66%	
Disbursments Per Loan Officer / for this month/ thousands Drams											
Մեկ վարկային մասնագետի հաշվով միջին վարկի մեծությունը / այս ամսվա համար/ հզ. Դր.	8,836	13,708	13,967	14,021	12,209	12,431	11,984	11,592	13,611	16,325	
Gross Loan Portfolio for Per Loan Officer / thousands Drams											
Մեկ Վարկային մասնագետի հաշվով Վարկային պորտֆելի միջին մեծությունը / հզ. Դր.	133,095	137,898	142,361	147,356	148,482	148,400	147,220	145,051	141,886	142,605	
Loan Portfolio / Total Assets Ratio (%)											
Վարկային Պորտֆել / Ակտիվներ հարաբերակցություն (%)	92.7%	93.1%	93.9%	92.2%	91.8%	91.6%	91.2%	89.2%	88.7%	89.6%	
Equity / Loan Portfolio Ratio (%)											
Ընդհանուր Կապիտալ / Համախառն Վարկային Պորտֆել հարաբերակցություն (%)	37.0%	36.3%	36.0%	35.5%	35.6%	36.5%	36.8%	37.4%	37.9%	37.6%	
Equity / Assets (%)											
Ընդհանուր Կապիտալ / Ակտիվներ հարաբերակցություն (%)	34.3%	33.7%	33.8%	32.8%	32.7%	33.5%	33.6%	33.4%	33.6%	33.6%	
Debt to Equity Ratio (%) (Leverage Ratio)											
Ընդհանուր Կապիտալ/Պարտավորություններ հարաբերակցություն (%)	191.3%	196.3%	196.3%	205.2%	206.0%	198.8%	197.8%	199.4%	197.4%	197.2%	

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀՈՒՆՎԱՐ - ՀՈԿՏԵՄԲԵՐ 2013 - Կումուլյատիվ

հազ. դր

Category	14-Jan	14-Feb	14-Mar	14-Apr	14-May	14-Jun	14-Jul	14-Aug	14-Sep	14-Oct	TOTAL
Total volume of disbursements within particular month	9,232	11,477	12,296	11,442	10,650	10,158	9,905	**9,883**	**10,767**	**11,997**	107,807
Հաշվետու ամսվա ընթացքում տրամադրված վարկերի քանակը և ծավալը	5,623,557	7,417,092	7,379,051	7,954,103	7,642,826	6,867,197	7,038,304	8,056,550	**7,844,273**	**9,496,269**	75,319,222
Gross Loan Portfolio											
Համախառն վարկային պորտֆել	**62,643,146**	**64,785,690**	**67,439,993**	**68,961,251**	**70,199,181**	**69,546,315**	**69,544,839**	**70,032,061**	**70,849,127**	**72,713,632**	
Number of clients											
Ակտիվ վարկառուների քանակ	126,184	127,912	130,181	130,659	131,193	129,784	128,874	128,375	**129,026**	**128,410**	
PAR 1-30 days											
ժամկետանց պորտֆել 1-30 օր	290,023	295,945	280,394	313,852	340,389	336,366	370,606	424,832	**435,994**	**622,450**	3,710,851
PAR over 30 days											
ժամկետանց պորտֆել 30 օրից ավելի	735,779	908,144	818,850	824,881	868,292	894,273	935,318	645,422	**669,392**	**686,100**	7,986,451
Net write offs YTD											
Զուտ դուրսգրումներ տարեսկզբից	**(5,904)**	**74,175**	**(2,305)**	**7,424**	**103,479**	**47,822**	**72,142**	**293,847**	**392,561**	**202,198**	
Number of credit officers											
Վարկային մասնագետների թիվը	522	532	541	540	545	544	547	560	**566**	**565**	
Total number of offices - branches and representative offices											
Մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ընդհանուր թիվը	102	103	103	104	107	106	107	107	**107**	**106**	
Total assets											
Ընդամենը ակտիվներ	**71,877,503**	**71,990,298**	**74,996,421**	**75,585,438**	**77,254,856**	**76,689,555**	**76,938,261**	**78,424,229**	**79,292,865**	**80,388,653**	
Total equity											
Ընդհանուր կապիտալ	**25,123,489**	**25,224,682**	**25,571,327**	**26,040,335**	**27,785,337**	**27,745,625**	**26,336,717**	**26,567,792**	**28,264,395**	**28,430,911**	

ՀԱՎԵԼՎԱԾ

Աճը ըստ ամիսների %
(2014 թվականը 2013 թվականի համապատասխան ամսվա նկատմամբ)

Category	Jan	Feb	March	April	May	June	July	August	September	October	TOTAL
Total volume of disbursements within particular month	(6.9)	10.6	(7.0)	(4.8)	(6.1)	0.6	1.1	(6.3)	0.7	4.0	(1.3)
Հաշվետու ամսվա ընթացքում տրամադրված վարկերի քանակը և ծավալը	(5.4)	10.5	10.9	2.9	(8.0)	4.5	(0.4)	(15.3)	5.3	5.7	1.2
Gross Loan Portfolio											
Համախառն վարկային պորտֆել	**27.9**	**27.3**	**23.7**	**24.8**	**21.8**	**23.1**	**23.8**	**22.0**	**21.6**	**20.6**	
Number of clients											
Ակտիվ վարկառուների քանակ	5.8	6.0	5.1	6.4	5.7	7.3	9.5	10.2	9.7	10.3	
PAR 1-30 days											
Ժամկետանց պորտֆել 1-30 օր	80.9	36.9	19.5	32.9	21.5	40.2	52.7	20.0	29.3	(8.2)	28.7
PAR over 30 days											
Ժամկետանց պորտֆել 30 օրից ավելի	23.5	(17.7)	(5.7)	(10.5)	(13.1)	(9.0)	(7.9)	66.2	59.9	79.5	12.3
Net write offs YTD											
Զուտ դուրսգրումներ տարեսկզբից		**82.0**		**3,342.3**	**226.2**	**721.2**	**545.9**	**77.9**	**43.5**	**187.0**	
Number of credit officers											
Վարկային մասնագետների թիվը	15.3	12.4	8.3	8.1	5.7	6.1	6.9	5.2	7.2	8.8	
Total number of offices - branches and representative offices											
Մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ընդհանուր թիվը	6.9	5.8	5.8	5.8	0.9	3.8	4.7	4.7	4.7	5.7	
Total assets											
Ընդամենը ակտիվներ	**20.3**	**23.1**	**18.5**	**23.5**	**20.6**	**21.9**	**22.8**	**22.1**	**22.4**	**21.8**	
Total equity											
Ընդհանուր կապիտալ	**18.1**	**18.6**	**17.3**	**17.5**	**9.5**	**12.8**	**20.4**	**20.4**	**15.5**	**15.9**	